"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"18" հունիսի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

21 ապրիլի 2005 թվականի N 727-Ա

"ՀԱՄՈ ԲԵԿՆԱԶԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ "ՀԱՅՖԻԼՄ" ԿԻՆՈՍՏՈՒԴԻԱ" ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով, ինչպես նաեւ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունիսի 13-ի N 882-Ն որոշմամբ հաստատված՝ պետական կառավարչական հիմնարկներին ամրացված, պետական ոչ
առեւտրային կազմակերպությունների սեփականություն հանդիսացող եւ դրանց ամրացված գույքի օտարման կարգով ամրագրված դրույթները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. "Համո Բեկնազարյանի անվան "Հայֆիլմ" կինոստուդիա" պետական ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացված գույքից հետ վերցնել Երեւանի Տերյան 2 հասցեում գտնվող շենքի համապատասխան մասը եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանձնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի տնօրինությանը:

2. "Համո Բեկնազարյանի անվան "Հայֆիլմ" կինոստուդիա" պետական ոչ առեւտրային կազմակերպությանն ամրացված՝ 266968 հազ. դրամ գնահատված արժեք ունեցող Երեւանի Գ. Չաուշի 50 հասցեում գտնվող 24292,6 քառ. մետր տարածք զբաղեցնող շենքը, շինությունները եւ կինոբեմադրական միջոցներն օտարել մրցույթով:

3. Մրցույթը կազմակերպելու եւ իրականացնելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով՝ հետեւյալ կազմով՝

Ա. Մարկոսյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Ս. Ղոնաղչյան - ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետ
Հ. Դավթյան - ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի գլխավոր խորհրդական
Գ. Մանասյան - ՀՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի ղեկավար

4. Մրցութային հանձնաժողովին՝ երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել եւ իրականացնել սույն որոշման 2-րդ կետում նշված գույքի (այսուհետ՝ գույք)՝ մրցույթով օտարումը՝ որպես մրցույթի պայմաններ սահմանելով՝

ա) գույքի՝ մրցույթով վաճառքի համար առաջարկվող նվազագույն գինը՝ 266968 հազ. դրամ.

բ) ներդրողը պարտավորվում է 10 տարվա ընթացքում "Համո Բեկնազարյանի անվան "Հայֆիլմ" կինոստուդիա" պետական ոչ առեւտրային կազմակերպության զարգացման նպատակով ներդնել առնվազն 10 մլրդ դրամ, որպես պարտավորություն, որը կվերահսկվի պետական կառավարման համապատասխան մարմնի կողմից եւ, ելնելով

ընկերության տեխնիկական զինվածության ու ֆինանսական վիճակից եւ ներդրողի մշակած ողջամիտ զարգացման ծրագրի պահանջներից, նախատեսել եւս մինչեւ 20 մլրդ դրամի չափով ներդրում:

(4-րդ կետը փոփ. 25.08.05 թիվ 1356-Ա որոշում)

5. Սահմանել, որ մրցույթի հաղթողը պարտավոր է՝

ա) օտարման գործարքը կնքելուց հետո եռամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գույքի ներդրմամբ հիմնադրել առեւտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն), որի հիմնադրման պահից վերջինիս են փոխանցվում մրցույթի հաղթողի ստանձնած պարտավորությունները.

բ) մրցույթի արձանագրությունն ստանալուց հետո 35-օրյա ժամկետում վճարել մրցույթի ժամանակ իր կողմից առաջարկված գումարը.

գ) իր միջոցների հաշվին վճարել գույքի արժեքի որոշման հետ կապված վճարը՝ 3203616 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ինչպես նաեւ գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

(5-րդ կետը փոփ. 25.08.05 թիվ 1356-Ա որոշում)

6. Սահմանել, որ կազմակերպությունը պարտավոր է՝

ա) պետական գրանցում ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում առնվազն մեկ տարի ժամկետով եւ առնվազն 50000 դրամ նվազագույն աշխատավարձով աշխատանքային պայմանագրեր կնքել սույն որոշման ընդունման պահին "Համո Բեկնազարյանի անվան "Հայֆիլմ" կինոստուդիա" պետական ոչ առեւտրային կազմակերպությունում աշխատող 275 աշխատողի հետ.

բ) պետական գրանցում ստանալու օրվանից առնվազն 50 տարի ժամկետով զբաղվել կինոարտադրությամբ եւ դրանից բխող գործունեությամբ՝ օգտագործելով "Համո Բեկնազարյանի անվան "Հայֆիլմ" կինոստուդիա" պետական ոչ առեւտրային կազմակերպության ապրանքային նշանը.

գ) իր միջոցների հաշվին եւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ֆիլմաֆոնդի օգտագործումը եւ պահպանումը՝ 50 տարի ժամկետով՝ պահպանելով հեղինակների հեղինակային իրավունքները.

դ) ապահովել Հայաստանի Հանրապետության միջնաժամկետ ծախսերի ծրագրերին համապատասխան՝ պետական պատվերի շրջանակներում պատվիրակվող ազգային ֆիլմերի
արտադրությունը.

ե) պետական գրանցում ստանալու օրվանից 10-օրյա ժամկետում, որպես սույն որոշմամբ սահմանված իր պարտավորությունների կատարման երաշխիք, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը տրամադրել Նորքերն Թրաստ բանկի երաշխիքային նամակ:

(6-րդ կետը փոփ. 25.08.05 թիվ 1356-Ա որոշում)

7. Թույլատրել "Համո Բեկնազարյանի անվան "Հայֆիլմ" կինոստուդիա" պետական ոչ առեւտրային կազմակերպությանն ուղղակի վաճառքի ձեւով կազմակերպությանը վաճառել "Համո Բեկնազարյանի անվան "Հայֆիլմ" կինոստուդիա" պետական ոչ առեւտրային կազմակերպության ապրանքային նշանը:

8. Սահմանել, որ կազմակերպությունն իրավունք կստանա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով 50 տարով վարձակալել "Համո Բեկնազարյանի անվան "Հայֆիլմ" կինոստուդիա" պետական ոչ առեւտրային կազմակերպության կողմից զբաղեցված 32.6 հեկտար հողատարածքը՝ ունենալով տվյալ պահին Հայաստանի Հանրապետությունում գործող հողի կադաստրային արժեքով գնման իրավունքի նախապատվություն:

9. Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարին՝ կազմակերպության հետ կնքել ֆիլմադարաններում պահպանվող ֆիլմաֆոնդի
առնվազն 50 տարով օգտագործման պայմանագիր:

10. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ մրցույթի հաղթողի կողմից սույն որոշման 5-րդ կետի "բ" եւ "գ" ենթակետերում նշված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վճարումից հետո գնորդի հետ կնքել

առուվաճառքի պայմանագիր:
11. Գաղտնի:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-ԻՆ